ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2018 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի վերահսկողական բնույթի հարցերում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ և 10.1-ին տողեր.

«

10.	***ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ***						
10.1	Հանրային սննդի ծառայությունն ունի համապատասխանության սերտիֆիկատ				փաստաթղթային զննում	ԼՂՀ կառավարության 26. 11. 2002թ. N 35 որոշում	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
2.	ԱՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Կ. ԱԹԱՅԱՆ		
3.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
4.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
5.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
6.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2018 թ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրանքի ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին» N 35 որոշմամբ սահմանված դրույթների իրագործումն ապահովելու, ինչպես նաև Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող վերահսկողական գործառույթներն ավելի ամբողջական դարձնելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերը չեն պարունակում դրույթներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ վերահսկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրանքի ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին» N 35 որոշմամբ սահմանված պահանջների կատարումը, մասնավորապես՝ հանրային սննդի ծառայությունների համապատասխան սերտիֆիկատների առկայության պարզումը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ հանրային սննդի ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով ստուգումն ամբողջական իրականացնելու համար, ինչպես նաև կապահովվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրանքի ծառայությունների համապատասխանության պարտադիր հավաստման մասին» N 35 որոշմամբ սահմանված դրույթների իրագործումը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 30-ի N 181-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
4. ԱՀ ֆինանսների նախարարություն
5. ԱՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Նախագիծը պատրաստողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին:

_____ ***Հ. Հակոբյան***
(ստորագրությունը)

«_____» _____ 2018 թ.